

Խ. Ա. ՄԻԼՔՈՒՄՅԱՆ

BIENERTIA CYCLOPTERA BGE

ԲՈՒՅՍԻ ԱԼԿԱԼՈՒԴԻՆԵՐԻ ՀԻՊՈՏԵՆԶԻՎ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն հաղորդման նյութ է հանդիսացել *Chenopodiaceae* ընտանիքին պատկանող *Bienertia* բույսի ուսումնասիրությունը: *Chenopodiaceae* ընտանիքի տարբեր տեսակների ներկայացուցիչները ՍՍՀՄ-ում գլխավորապես աճում են Միջին Ասիայում: Նրանք լայն կիրառում են գտել բժշկական և անասնաբուժական պրակտիկայում:

Հիպոտենզիվ ազդեցություն ունեցող պարունակող տեսակներին է պատկանում՝ *Salsola Richteri* Kar-ը: Այն պարունակում է սալսոլին և սալսոլիդին արկալոիդներ, որոնք մաքուր վիճակում անջատվել են 1934 թվին Ա. Պ. Օրբելովի և Ն. Ռ. Պրոսկուրնինայի կողմից [3, 4]։ *Salsola glauca* M. B. [2], *S. ruthenica* Iljin, *S. soda* L., *S. kali* L. բույսերի մեջ նույնպես հայտնաբերված է սալսոլին արկալոիդը [7]: *Suaeda physophora* Pall բույսի ջրալին, սպիրտալին և չոր էքստրակտների հիպոտենզիվ ակտիվությունը ապացուցված է Ջ. Ս. Պարթևի հետազոտություններով [5, 6]:

Հայաստանում *Chenopodiaceae* ընտանիքի տեսակները գլխավորապես աճում են Արարատյան դաշտավայրի կիսաանապատային շրջաններում:

Առաջնորդվելով բուսաբանական-ազդակցական տեսակների ֆիզիոլոգիկական համեմատական սկզբունքով, մենք կատարել ենք *Bienertia cycloptera* (*Chenopodiaceae* ընտանիքից) բույսից անջատված երեք առանձին արկալոիդների նախնական հետազոտություններ՝ նրանց հիպոտենզիվ ազդեցությունը պարզելու նպատակով:

Հետազոտվող արկալոիդները Bn—1, Bn—2 և Bn—3 մեր կողմից անջատվել են ՀՍՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտի բուսական ծագում ունեցող դեղամիջոցների լաբորատորիայում [1]:

Պրեպարատների հիպոտենզիվ ազդեցության ուսումնասիրման համար որպես ցուցանիշ վերցվել է արյան ճնշումը սուր փորձերում, որոնք դրվել են 5 շների վրա՝ պրոմեդոլ-նեմբուտալին նարկոզի պայմաններում (Sol. Promedol 20% —2,0, nembutal—30 մգր 1 կգ կենդանու քաշին, ներորովալին)։

Մեր կողմից հետազոտվող բոլոր պրեպարատների ներարկումներն առաջացրին արյան ճնշման արտահայտված անկում, այն դեպքում, երբ կոնտրոլ լուծույթների ներարկումները մնում էին անհետեանք:

Կատարված փորձերը թույլ են տալիս անելու նախնական եզրակացություն այն մասին, որ *Bienertia* բույսից ստացված բոլոր պրեպարատներն էլ այս կամ այն չափով օժտված են հիպոտենզիվ ազդեցությամբ, որի մեծությունը կախում ունի պրեպարատի տեսակից և դոզայից: Ամենալավ հիպոտենզիվ ազդեցությամբ օժտված է Pn—1-ի 10% ջրալին լուծույթը:

Այսպես, Bienertia պրեպարատների էկվիվալենտ զոզաների՝ 20 մգ/կգ ներարկման ժամանակ, դեպքերի մեծ մասում արյան ճնշումն իջնում է Bn-1-ի դեպքում 30 մմ, իսկ Bn-3-ի դեպքում՝ 10—20 մմ սնդիկի սյան չափով: Մեր բոլոր հետազոտությունների ընթացքում ընդամենը կատարվել է Biener-tia պրեպարատների 14 ներարկում:

Արյան ճնշման վերականգնումը մինչև ելակետային մակարդակը սովորաբար տեղի է ունենում 3—5 րոպեի ընթացքում, իսկ մի քանի դեպքերում լրիվ վերականգնման համար պահանջվեց ավելի երկար ժամանակ՝ 10—15 րոպե:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ լուրաքանչլուր նոր ներարկում կատարվել է նախորդ ներարկումից 10—15 րոպե անց, այսինքն արյան ճնշման լրիվ, մնալուն վերականգնումից հետո միայն:

Bienertia բույսի պրեպարատների ներարկումներից ստացված արյան ճնշման փոփոխությունների տվյալներն ամփոփված են № 1 աղյուսակում:

Աղյուսակ 1
Bienertia-ի ակալոիդների ազդեցությունն արյան ճնշման վրա

Պրեպարատներ	Ներարկվող պրեպարատների զոզան մմ-ով	Արյան ճնշման իջեցումը սնդիկի սյան մմ-ով	Ներարկվող պրեպարատի խտությունը
Bn —1	5	30	10% ջրային լուծույթ
	10	10	
	20	30	
	20	30	
Bn —2	20	20	10% ջրային լուծույթ
	50	50	
Bn —3	20	—	10% ջրային լուծույթ
	20	30	
	20	10	
	50	10	10% ջրային լուծույթ
	10	20	
	10	20	
	20	10	
100% սպիրտի լուծույթ/լուծիչ	20	—	Կոնտրոլ

Ինչպես երևում է ըբրված աղյուսակից, Bn—1 պրեպարատի հիպոտենզիվ ազդեցությունը, մյուսների համեմատ, ամենաբարձրն է, չնայած, երեք պրեպարատները մեկը մյուսից ունեն աննշան տարբերություն:

Մեր կողմից ստացված տվյալները հետաքրքիր է համեմատել Օշան (Salsola) բույսի մյուս տեսակներից ստացված պրեպարատների հիպոտենզիվ ազդեցության հետ (աղյուսակ 2):

Այսպիսով, մեր հետազոտությունների հիման վրա հանգում ենք այն

Chenopodiaceae ընտանիքի մյուս տեսակներից ստացված պրեպարատների ազդեցությունը արյան ճնշման վրա

Բույսերի տեսակը	Պրեպարատ	Պրեպարատի զոզան մգր/կգ	Արյան ճնշման էջեցումը սնդիկի սյան մմ-ով	Հեղինակ
Salsola Richteri	Սալսոլին	10—25 20—35	50—70 15—25	Ե. Բ. Բերիին Ք. Ս. Գվիշևանի
Salsola glauca	100% եփուկ էքստրակտ	1,0	15—20	Ս. Հ. Միրզոյան Ս. Մ. Հովսեփյան
Suaeda physophora	100% եփուկ չոր էքստրակտի ջրային լուծույթ	50 50	25—35 15—20	Զ. Խ. Պարթև
	Չոր էքստրակտի սպիրտային լուծույթ—70°	50 50	10—20 15—25	

Նախնական եզրակացությունը, որ Bienertia բույսը հարուստ է արժեքավոր ակալոիդներով՝ օժտված հիպոտենզիվ ազդեցությամբ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսակետից:

Ստացված է 2/4 1968 թ.

Х. А. МЕЛКУМЯН

О ГИПОТЕНЗИВНОМ ДЕЙСТВИИ АЛКАЛОИДОВ BIENERTIA CYCLOPTERA BGE

Нами проведено предварительное фармакологическое испытание трех алкалоидов (Вп-1, Вп-2, Вп-3), выделенных в индивидуальном состоянии в Лаборатории растительных ресурсов БИН-а АН Арм. ССР на гипотензивное действие.

В опытах, проведенных на 5 собаках, установлено, что алкалоиды Бинерции окружнокрылой (Вп-1, Вп-2, Вп-3) обладают гипотензивным свойством.

Л И Т Е Р А Т У Р А

1. Золотницкая С. Я., Мелкумян Х. А. Биологический журнал Армении, 1962, 2.
2. Мирзоян С. А., Овсепян А. М. В сб.: Лек. растения Армении и их лечебные препараты, т. 1. Ереван, 1949.
3. Орехов А. П., Проскурнина Н. Ф. Хим. фармацевтической пром., 1934, 2, 8.
4. Орехов А. П., Проскурнина Н. Ф. Хим. фармацевтической пром., 1934, 5, 5.
5. Партев З. Х. Известия АН Арм. ССР (биол. науки), 1953, VI, 10, 35.
6. Партев З. Х. Фармакология и токсикология, 1952, 3, 51.
7. Borkowski B., Drost K., Pasichowa B. Acta Polon. Pharmac., 1959, 16, 1, 57.